ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

**«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ
սպառողների ջրամատակարարման
տևողության ցուցանիշների առնչությամբ
տեղեկատվության հավաստիության մոնիթորինգի
արդյունքների մասին**

ԵՐԵՎԱՆ 2013

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի №519Լ որոշմամբ հաստատված հանձնաժողովի 2013 թվականի աշխատանքային ծրագրի 16-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը 2013 թվականի մայիսի 1-ից նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում պետք է իրականացներ խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաստիության ընտրանքային ուսումնասիրություն՝ ներկայացնելով կատարված աշխատանքների արդյունքներն ամփոփող համապատասխան վերլուծական տեղեկանք:

Նախ հարկ է նշել, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 23-ի N129Ն, 2004 թվականի հունիսի 1-ի N62Ն և հոկտեմբերի 12-ի N128Ն, 2005 թվականի հուլիսի 22-ի N99Ն և N100Ն որոշումներով հաստատվել են համապատասխանաբար «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջները: Վերը նշված որոշումների համաձայն, խմելու ջուր մատակարարող ընկերությունները յուրաքանչյուր տարի մինչև փետրվարի 15-ը հանձնաժողով են ներկայացնում տեղեկատվություն՝ իրենց սպասարկման տարածքի ջրամատակարարման տևողության ցուցանիշների մասին՝ այդ և դրան հաջորդող տարվա համար: Հանձնաժողով ներկայացվող ջրամատակարաման տևողության ցուցանիշները հենվում են ընկերությունների կողմից պարբերաբար հրապարակվող խմելու ջրի մատակարարման գրաֆիկների վրա: Ընկերությունները, վերը նշված որոշումների պահանջների համաձայն, գրաֆիկները հրապարակում են տարեկան առնվազն երկու անգամ՝ տվյալ տարվա ապրիլ և սեպտեմբեր ամիսների 15-25-ն ընկած ժամանակահատվածներում, այդ տարածքի բաժանորդներին հասու

առնվազն մեկ օրաթերթում, որոնցից առաջինը գործում է տվյալ տարվա մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ն, իսկ երկրորդը՝ հոկտեմբերի 1-ից մինչև մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածի համար: Գրաֆիկները պետք է կազմվեն և հրապարակվեն այնպես, որ սպասարկման տարածքի ցանկացած բաժանորդ հնարավորություն ունենա ծանոթանալու իր գրաֆիկին: Հրապարակումից առնվազն երեք աշխատանքային օր առաջ ընկերությունը պարտավոր է իր սպասարկման տարածքի բաժանորդներին առնվազն մեկ հեռուստաալիքով երեք օր անընդմեջ՝ օրական առնվազն երկու անգամ, նվազագույնը մեկ ժամ ընդմիջումով, ժամը 18^{00}-ից 23^{00}-ն ընկած ժամանակահատվածում իրազեկել նոր գրաֆիկի հրապարակման ժամկետի և օրաթերթի անվանման մասին: Ընկերությունը պարտավոր է հրապարակումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ օրաթերթի առնվազն մեկ օրինակ պատվիրված նամակով անվճար ուղարկել իր սպասարկման տարածքի տեղական ինքնակառավարման մարմիններ: Ընկերությունը պարտավոր է իր սպասարկման տարածքի բոլոր բաժանորդներին յուրաքանչյուր ամիս նախորդ ամսում սպառված ջրի դիմաց ներկայացվող վճարման փաստաթղթերում ներառել նաև տվյալ բաժանորդի հաջորդ ամսվա ջրամատակարարման նվազագույն գրաֆիկի ժամերը:

Միևնույն ժամանակ, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 25-ի «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից սպառողների խմելու ջրի մատակարարման ընդհատումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացման կարգը հաստատելու մասին» №290Ա որոշմամբ սահմանված կարգի համաձայն խմելու ջուր մատակարարող ընկերությունները յուրաքանչյուր եռամսյակի համար, մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա ավարտը, հանձնաժողով են ներկայացնում տեղեկատվություն իրենց կողմից սպասարկվող բնակավայրերի բաժանորդների խմելու ջրի մատակարարման ընդհատումների վերաբերյալ: Տեղեկատվությունը ներկայացվում է նշված կարգով հաստատված ձևին համապատասխան և հանձնաժողովի աշխատանքային ծրագրով սահմանված ժամկետներում հրապարակվում են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային

կայք էջում: Տեղեկատվությունը հանձնաժողով է ներկայացվում ընկերությունների կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների կատարման ապահովվումը դիտարկելու և վերահսկելու, ինչպես նաև մատուցվող ծառայությունների որակի հետագա բարելավվումն ապահովելու նպատակով:

Սույն վերլուծական տեղեկանքում ներկայացված է խմելու ջուր մատակարարող ընկերության, բաժանորդների խմբի, սպասարկման որակի ցուցանիշների ընտրության հիմնավորումները, ինչպես նաև ընտրանքի մեթոդը, իրականացման ընթացքը և արդյունքերը: Վերլուծական տեղեկանքի ամփոփիչ մասում ներկայացված են եզրակացությունները և առաջարկությունները:

Սույն վերլուծական տեղեկանքի կազմման նպատակով մոնիթորինգի աշխատանքները համակարգել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ Մ. Կոշեցյանը, իսկ մոնիթորինգն իրականացվել է հանձնաժողովի աշխատակազմի լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային ծրագրերի վարչության կողմից:

ԲԱԺԻՆ 1. Մոնիթորինգի ենթարկված խմելու ջուր մատակարարող ընկերության և սպասարկման որակի ցուցանիշի ընտրությունը

1.1 Մոնիթորինգի ենթարկված խմելու ջուր մատակարարող ընկերության ընտրությունը

Խմելու ջրի մատակարարման ոլորտում հանձնաժողովի կարգավորման դաշտում գործունեություն են իրականացնում «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունները: Ընկերությունների բաժանորդների քանակը ներկայացված է աղյուսակ 1-ում.

Աղյուսակ 1

Ընկերությունը	Բաժանորդների քանակը 2013 թվականի մայիսի 1-ի դրությամբ
«Երևան Ջուր» ՓԲԸ	322785
«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ	273830
«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ	50028
«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ	35855
«Նոր Ակունք» ՓԲԸ	17883

Նշված ընկերություններից առավել մեծ սպասարկման տարածքն ունի «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն, որը խմելու ջուր է մատակարարում 38 քաղաքային և 267 գյուղական համայնքներում: Հաշվի առնելով այդ հանգամանքը, մոնիթորինգն իրականացվել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ սպասարկման տարածքում: Միևնույն ժամանակ, քանի որ իրենց կարողությունների առումով առավել խոցելի են գյուղական համայնքների բաժանորդները, մոնիթորինգի աշխատանքներն իրականացվել են ընկերության սպասարկման տարածքի գյուղական համայնքների խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի ցուցանիշների գնահատման նպատակով:

1.2 Մոնիթորինգի ենթարկված սպասարկման որակի ցուցանիշի ընտրությունը

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի ցուցանիշները սահմանված են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի հունիսի 1-ի N62Ն որոշմամբ: Սպասարկման որակի ցուցանիշները հետևյալն են.

1. Ջրամատակարարման տևողության ցուցանիշները, ներառյալ դրանց վերաբերյալ բաժանորդներին իրազեկման ընթացակարգը,
2. Ջրամատակարարման պլանային և վթարային ընդհատումների ցուցանիշները, ներառյալ դրանց իրազեկման ընթացակարգը:

Սպասարկման որակի վերը նշված ցուցանիշներից այս պահին բաժանորդների տեսանկյունից ամենազգայունը ջրամատակարարման տևողության ցուցանիշն է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերության սպասարկման տարածքում բաժանորդների ջրամատակարարումն իրականացվում է պարբերաբար հրապարակվող գրաֆիկների համաձայն: Գրաֆիկների հրապարակման և վերջինիս մասին իրազեկման ընթացակարգն արդեն իսկ ներկայացված է սույն վերլուծական տեղեկանքի նախաբանում:

Այդ հանգամանքից ելնելով մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից 2013 թվականի ապրիլի 20-ին «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակված ջրամատակարարման գրաֆիկներին առնչվող տեղեկատվության հավաստիությունը գյուղական բնակավայրերի համար պարզելու նպատակով:

1.3 Մոնիթորինգի իրականացման մեթոդաբանությունը

Մոնիթորինգ իրականացվել է հարցման միջոցով: Հարցումը կազմակերպվել է գյուղական համայնքների ղեկավարների շրջանում՝ տվյալ համայնքում հրապարակված ջրամատակարարման գրաֆիկի մասին վերջինիս իրազեկված լինելու, ինչպես նաև հրապարակված ջրամատակարարման գրաֆիկներին առնչվող տեղեկատվության համապատասխանությունը փաստացի ջրամատակարարման տևողության ցուցանիշներին պարզելու նպատակով:

Հարցումը գյուղական համայնքների ղեկավարների շրջանում իրականացնելը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջիններս առավել իրազեկված են իրենց համայնքի ջրամատակարարման գրաֆիկի մասին, քան բնակիչները, ինչը մեր կարծիքով հնարավորություն կտա ունենալ առավել համապարփակ գնահատական:

Գյուղական համայնքներն ընտրվել են պատահական ընտրանքի եղանակով՝ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքի գյուղական բնակավայրերն ըստ մարզերի, այբբենական կարգով դասակարգելուց հետո՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով սահմանված ցանկի համաձայն:

Մոնիթորինգի ներկայացուցչական արդյունքների ապահովման համար ընտրվել է 10% սխալանքի չափը՝ 95% վստահելի հավանականության մակարդակի սահմանում: Նշված չափորոշիչների դեպքում 267 գյուղական բնակավայրերից բավարար է իրականացնել 71 հարցում: Մոնիթորինգի ընթացքում հնարավոր այլ շեղումներից խուսափելու նպատակով հարցումն ուղարկվել է 93 գյուղական համայնքների ղեկավարների:

ԲԱԺԻՆ 2. Մոնիթորինգի իրականացումը և դրա արդյունքները

2.1 Մոնիթորինգի հարցումների իրականացումը

Սույն թվականի հունիսի 27-ից հուլիսի 18-ն ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարման «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից 2013 թվականի ապրիլի 20-ին հրապարակված և փաստացի գործող գրաֆիկների համապատասխանության վերաբերյալ ընտրանքային եղանակով գրավոր հարցումներ են կատարվել թվով 93 գյուղական բնակավայրերի համայնքների ղեկավարներից: Ըստ մարզերի կատարված հարցումների քանակն և դրանց վերաբերյալ համայնքների ղեկավարներին ուղղված գրությունների ուղարկման ժամկետները բերված են աղյուսակ 2-ում.

Աղյուսակ 2

Մարզը	Ըստ մարզերի կատարված հարցումների քանակը	Հարցումներն ուղարկելու ամսաթիվը
2	*3*	*4*
Արագածոտն	13 հատ	27.06.2013թ.
Արարատ	24 հատ	03.07.2013թ.
Արմավիր	10 հատ	12.07.2013թ.
Գեղարքունիք	6 հատ	
Լոռի	11 հատ	
Կոտայք	8 հատ	18.07.2013թ.
Շիրակ	11 հատ	
Սյունիք	6 հատ	
Վայոց ձոր	2 հատ	
Տավուշ	2 հատ	
Ընդամենը	93 հատ	

Հարցման արդյունքում թվով 93 համայնքների ղեկավարներից 33-ը հարցմանը պատասխանել են գրավոր, 58-ը՝ հեռախոսազանգերի միջոցով, իսկ հարցումներից 2-ը մնացել են անպատասխան:

Գրավոր պատասխաններ ներկայացրած համայնքների ղեկավարներից 24-ը հայտնել են, որ տվյալ պահին խմելու ջրի մատակարարման փաստացի գործող գրաֆիկները համապատասխանում են վերջին անգամ հրապարակվածին, իսկ 9-ն

արձանագրել են, որ առկա են խախտումներ և ջրամատակարարման փաստացի գործող գրաֆիկները չեն համապատասխանում վերջին անգամ հրապարակվածին:

Հեռախոսազանգերի միջոցով հարցմանը պատասխանած համայնքների ղեկավարներից 53-ը նույնպես հայտնել են, որ տվյալ պահին խմելու ջրի մատակարարման փաստացի գործող գրաֆիկները համապատասխանում են վերջին անգամ հրապարակվածին, իսկ 5-ն արձանագրել են, որ առկա են խախտումներ և ջրամատակարարման փաստացի գործող գրաֆիկները չեն համապատասխանում վերջին անգամ հրապարակվածին:

Վերջնական արդյունքում՝ հարցմանը պատասխանած 91 գյուղական բնակավայրերիից 77-ի համայնքների ղեկավարները հայտնել են, որ տվյալ պահին խմելու ջրի մատակարարման փաստացի գործող գրաֆիկները համապատասխանում են վերջին անգամ հրապարակվածին, իսկ 14-ը փաստել են, որ առկա են խախտումներ և ջրամատակարարման փաստացի գործող գրաֆիկները չեն համապատասխանում վերջին անգամ հրապարակվածին:

Հարկ ենք համարում նշել նաև, որ հարցման արդյունքում պազվել է, որ 91 համայքներից 11-ը հանդիսանում են խմելու ջրի մեծածախ բաժանորդներ, ուստի վերջիններիս տարածքում խմելու ջրի մատակարարումը կազմակերպվում է ոչ թե ընկերության, այլ համայնքի միջոցով: Միևնույն ժամանակ պարզվել է, որ ընկերության կողմից 267 գյուղական համայնքերից մեծածախ ջրամատակարարում է իրականացվում 51-ում: Հաշվի առնելով այդ հանգամանքը, մոնիթորինգի արդյունքների ամփոփման ընթացքում նշված համայնքները չեն դիտարկվի: Հարկ է նաև նշել, որ նշված 11 համայնքների ղեկավարները հայտնել են, որ ընկերությունը պահպանում է հրապարակված ջրամատակարարման գրաֆիկը:

Միևնույն ժամանակ համայնքների ղեկավարները ջրամատակարարման գրաֆիկները օրաթերթում հրապարակելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ օրաթերթի օրինակը պատվիրված նամակով ստացված չլինելու մասին որևէ տեղեկատվություն չեն հաղորդել:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից 2013 թվականի ապրիլի 20-ին հրապարակված գրաֆիկներին փաստացի գործող գրաֆիկների

անհամապատասխանության վերաբերյալ թվով 14 գրությունները ստացվել են աղյուսակ 3-ում բերված գյուղական բնակավայրերի համայնքների ղեկավարներից.

Աղյուսակ 3

№	Մարզը և բնակավայրը	2013 թվականի ապրիլի 20-ին հրապարակված գրաֆիկը և բաժանորդների քանակը	Հանձնաժողովի ելից գրության համարը և ամսաթիվը	Համայնքի ղեկավարի պատասխան գրության մտից համարը և ամսաթիվը	Համայնքի ղեկավարի անունը, ազգանունը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	Արագածոտնի մարզ գյուղ Կոշ	8^{00}-13^{00}՝ 5 ժամ (292 բաժանորդ)	№ՄԿ-1218 Լ 27.06.2013թ.	Պատասխանը ստացվել է հեռախոսազանգով	Աշոտ Ենգիբարյան
2	Արագածոտնի մարզ գյուղ Շամիրամ	8^{00}-13^{00}՝ 5 ժամ (336 բաժանորդ)	№ՄԿ-1221 Լ 27.06.2013թ.	№2180 09.07.2013թ.	Մրազ Բրոյան
3	Արարատի մարզ գյուղ Դաշտավան	8^{00}-23^{00}՝ 15 ժամ (408 բաժանորդ)	№ՄԿ-1273 Լ 03.07.2013թ.	№2211 11.07.2013թ. №2713 14.08.2013թ.	Սերյոժա Խաչատրյան
4	Արարատի մարզ գյուղ Խաչփառ	8^{30}-23^{00}՝ 14,5 ժամ (563 բաժանորդ)	№ՄԿ-1269 Լ 03.07.2013թ.	№2934 09.09.2013թ.	Ղազար Մարտիրոսյան
5	Արարատի մարզ գյուղ Մասիս	9^{30}-16^{30}՝ 7 ժամ (403 բաժանորդ)	№ՄԿ-1267 Լ 03.07.2013թ.	Պատասխանը ստացվել է հեռախոսազանգով	Սողոմոն Մարգարյան
6	Արարատի մարզ գյուղ Նշավան	8^{30}-15^{30}՝ 7 ժամ (484 բաժանորդ)	№ՄԿ-1265 Լ 03.07.2013թ.	№2312 17.07.2013թ.	Մկրտիչ Ներսիսյան
7	Կոտայքի մարզ գյուղ Սարալանջ	7^{00}-9^{00} և 18^{00}-20^{00}՝ 4 ժամ (140 բաժանորդ)	№ՄԿ-1410 Լ 18.07.2013թ.	Պատասխանը ստացվել է հեռախոսազանգով	Գեղամ Զիլիֆյան
8	Լոռու մարզ գյուղ Կարմիր Աղեկ	օրընդմեջ 13^{00}-17^{00}՝ 4 ժամ (51 բաժանորդ)	№ՄԿ-1372 Լ 12.07.2013թ.	№2968 13.09..2013թ.	Վաչագան Հովհաննիսյան
9	Լոռու մարզ գյուղ Մեդովկա	8^{00}-20^{00}՝ 12 ժամ (95 բաժանորդ)	№ՄԿ-1374 Լ 12.07.2013թ.	№2582 01.08.2013թ.	Սամվել Ավետիսյան
10	Լոռու մարզ գյուղ Օձուն	24 ժամ (1595 բաժանորդ)	№ՄԿ-1379 Լ 12.07.2013թ.	№2512 29.07.2013թ.	Արսեն Տիտանյան
11	Շիրակի մարզ գյուղ Մեղրաշեն	10^{00}-19^{00}՝ 9 ժամ (327 բաժանորդ)	№ՄԿ-1418 Լ 18.07.2013թ.	Պատասխանը ստացվել է հեռախոսազանգով	Հունան Պետրոսյան
12	Շիրակի մարզ գյուղ Նոր Կյանք	12^{00}-15^{00}՝ 3 ժամ (299 բաժանորդ)	№ՄԿ-1419 Լ 18.07.2013թ.	№2513 29.07.2013թ.	Արա Սուքիասյան

13	Շիրակի մարզ գյուղ Վարդաքար	15^{00}-18^{00}՝ 3 ժամ (146 բաժանորդ)	№ՄԿ-1420 Լ 18.07.2013թ.	Պատասխանը ստացվել է հեռախոսազանգով	Գալուստ Ավետիսյան
14	Տավուշի մարզ գյուղ Ազատամուտ	4 օրը մեկ 8^{00}-10^{00}՝ 2 ժամ (888 բաժանորդ)	№ՄԿ-1430 Լ 18.07.2013թ.	№2923 06.09.2013թ.	Ժորա Մարտիրոսյան

Վերը նշված խախտումների վերաբերյալ գրավոր պատասխաններից 6-ը պարզաբանումներ ստանալու նպատակով վերահասցեագրվել են «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին: Ընկերության կողմից ներկայացվել են որոշ փաստարկներ և հիմնավորումներ, որոնց համաձայն հրապարակված գրաֆիկները նշված համայնքներում պահպանվել են:

Հաշվի առնելով «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից 2013 թվականի ապրիլի 20-ին հրապարակված խմելու ջրի մատակարարման գրաֆիկներին փաստացի գործող ջրամատակարարման գրաֆիկների անհամապատասխանության առնչությամբ նշված 14 համայնքների ղեկավարների հայտարարությունները, ինչպես նաև «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ներկայացրած բացատրությունները, համապարփակ եզրակացություն կազմելու նպատակով իրականացվել է կրկնակի հարցում՝ նշված 14 համայնքների ղեկավարների շրջանում:

Հարցումն իրականացվել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սույն թվականի սեպտեմբերի 21-ին «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակված ջրամատակարարման նոր գրաֆիկներին առնչվող տեղեկատվության հավաստիությունը պարզելու նպատակով:

Կրկնակի հարցման արդյունքում 14 համայնքների ղեկավարներից 7-ը հայտնել են, որ խմելու ջրի մատակարարման փաստացի գործող գրաֆիկները համապատասխանում են վերջին անգամ հրապարակվածին, իսկ մնացած 7-ն արձանագրել են, որ առկա են խախտումներ և ջրամատակարարման փաստացի գործող գրաֆիկները չեն համապատասխանում վերջին անգամ հրապարակվածին: «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից 2013 թվականի սեպտեմբերի 21-ին հրապարակված գրաֆիկներին փաստացի գործող գրաֆիկների

անհամապատասխանության վերաբերյալ թվով 7 գրությունները ստացվել են աղյուսակ 4-ում բերված գյուղական բնակավայրերի համայնքների ղեկավարներից.

Աղյուսակ 4

№	Մարզը և բնակավայրը	2013 թվականի սեպտեմբերի 21-ին հրապարակված գրաֆիկը և բաժանորդների քանակը	Հանձնաժողովի ելից գրության համարը և ամսաթիվը	Համայնքի ղեկավարի պատասխան գրության մտից համարը և ամսաթիվը	Համայնքի ղեկավարի անունը, ազգանունը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	Արագածոտնի մարզ գյուղ Կոշ	8^{00}-13^{00}՝ 5 ժամ (294 բաժանորդ)	№ՄԿ-1936 Լ 26.09.2013թ.	№3241 18.10.2013թ.	Աշոտ Ենգիբարյան
2	Արագածոտնի մարզ գյուղ Շամիրամ	8^{00}-13^{00}՝ 5 ժամ (336 բաժանորդ)	№ՄԿ-1941 Լ 26.09.2013թ.	№3137 07.10.2013թ.	Մրազ Բրոյան
3	Արարատի մարզ գյուղ Խաչփառ	8^{00}-23^{00}՝ 15 ժամ (579 բաժանորդ)	№ՄԿ-1943 Լ 26.09.2013թ.	№3159 09.10.2013թ.	Ղազար Մարտիրոսյան
4	Արարատի մարզ գյուղ Նշավան	8^{30}-15^{30}՝ 7 ժամ (485 բաժանորդ)	№ՄԿ-1942 Լ 26.09.2013թ.	№3296 24.10.2013թ.	Արտակ Ավագյան
5	Լոռու մարզ գյուղ Կարմիր Աղեկ	օրընդմեջ 13^{00}-17^{00}՝ 4 ժամ (51 բաժանորդ)	№ՄԿ-1940 Լ 26.09.2013թ.	№3221 17.10.2013թ.	Վաչագան Հովհաննիսյան
6	Շիրակի մարզ գյուղ Մեղրաշեն	10^{00}-19^{00}՝ 9 ժամ (328 բաժանորդ)	№ՄԿ-1947 Լ 26.09.2013թ.	№3415 01.11.2013թ.	Հունան Պետրոսյան
7	Տավուշի մարզ գյուղ Ազատամուտ	4 օրը մեկ 8^{00}-10^{00}՝ 2 ժամ (888 բաժանորդ)	№ՄԿ-1934 Լ 26.09.2013թ.	№3209 16.10.2013թ.	Ժորա Մարտիրոսյան

Միևնույն ժամանակ դիտարկվել է նաև համայնքների ղեկավարներից կատարված առաջին հարցումից հետո ընկած ծամանակահատվածն ընդգրկող երրորդ եռամսյակի համար բաժանորդների խմելու ջրի մատակարարման ընդհատումների վերաբերյալ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը՝ պարզելու համար վերը նշված 7 գյուղական համայնքներում գրանցված ընդհատումների քանակը: Տեղեկատվության համաձայն, երրորդ եռամսյակի ընթացքում Խաչփառ համայնքում իրականացվել է խմելու ջրի մատակարարման ընդամենը 3 վթարային ընդհատում, իսկ մնացած 6 համայնքներում ընդհատումներ ընդհանրապես չեն գրանցվել:

ԲԱԺԻՆ 3. Եզրակացություններ և առաջարկություններ

3.1 Եզրակացություններ

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաստիության ընտրանքային ուսումնասիրության նպատակով.

- 2013 թվականի ապրիլի 20-ին հրապարակված և փաստացի գործող խմելու ջրի մատակարարման գրաֆիկների համապատասխանության վերաբերյալ ընտրանքային եղանակով թվով 80 գյուղական բնակավայրերի համայնքների ղեկավարներից (նվազեցված է մեծածախ ջրամատակարարում ունեցող համայնքների քանակը) կատարված գրավոր հարցումներից 14-ի դեպքում պատասխանվել է, որ առկա են խախտումներ և ջրամատակարարման փաստացի գործող գրաֆիկները չեն համապատասխանում վերջին անգամ հրապարակվածին: Հաշվի առնելով «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից 2013 թվականի ապրիլի 20-ին հրապարակված խմելու ջրի մատակարարման գրաֆիկներին փաստացի գործող ջրամատակարարման գրաֆիկների անհամապատասխանության առնչությամբ նշված 14 համայնքների ղեկավարների հայտարարությունները, ինչպես նաև «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ներկայացրած բացատրությունները, համապարփակ եզրակացություն կազմելու նպատակով իրականացվել է կրկնակի հարցում՝ նշված 14 համայնքների ղեկավարների շրջանում,
- 2013 թվականի սեպտեմբերի 21-ին հրապարակված և փաստացի գործող խմելու ջրի մատակարարման գրաֆիկների համապատասխանության վերաբերյալ խախտումներ արձանագրած 14 գյուղական բնակավայրերի համայնքների ղեկավարներից կրկին անգամ կատարված գրավոր հարցումներից 7-ի դեպքում պատասխանվել է, որ առկա են խախտումներ և ջրամատակարարման փաստացի գործող գրաֆիկները չեն համապատասխանում վերջին անգամ հրապարակվածին:

Հաշվի առնելով վերը նշվածը, գյուղական համայնքների ղեկավարների շրջանում իրականացված առաջին հարցման, ինչպես նաև համապարփակ եզրակացություն կազմելու նպատակով իրականացված կրկնակի հարցման արդյունքներով հարկ է եզրակացնել, որ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից հրապարակված ջրամակատակարարման գրաֆիկները իր սպասարկման տարածքի 216 գյուղական համայքներից (նվազեցված է մեծածախ ջրամակատարակարում ունեցող համայնքների քանակը) չեն պահպանվում շուրջ 8.75%-ում (եզրակացության սխալանքի հնարավոր չափը՝ 10%):

Միևնույն ժամանակ 2013 թվականի երրորդ եռամսյակի խմելու ջրի մատակարարման ընդհատումների վերաբերյալ տեղեկատվության դիտարկման արդյունքում պարզվել է, որ նշված 7 գյուղական համայնքներից Խաչփառ համայնքում իրականացվել է թվով 3 վթարային ընդհատում, իսկ մնացած 6 համայնքներում ընդհատումներ չեն գրանցվել:

Մեծածախ ջրամատակարարում ստացող գյուղական համայնքները մոնիթորինգի արդյունքների ամփոփման ընթացքում չեն դիտարկվել, քանի որ նշված համայնքներում ջրամատակարարումն իրականացվում է ոչ թե ընկերության, այլ համայնքի կողմից:

3.2 Առաջարկություններ

Հաշվի առնելով կատարված մոնիթորինգի արդյունքները առաջարկում ենք.

1. Մոնթորինգի արդյունքները ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե,
2. Հստակեցնել ընկերության սպասարկման տարածքը՝ հաշվի առնելով, որ մեծածախ ջրամատակարարում ստացող համայքներում ջրամատակարարումն իրականացվում է ոչ թե ընկերության, այլ համայնքի կողմից, ինչպես նաև ընկերության կողմից փաստացի սպասարկվող ոչ բոլոր բնակավայրերն են ներառված հանձնաժողովի 2005 թվականի հոկտեմբերի 4-ի «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը ջրային համակարգի օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» N140Ա որոշմամբ

հաստատված թույլտվության պայմանների N1 հավելվածով սահմանված գործունեության իրականացման աշխարհագրական տարածքում և հակառակը՝ գործունեության իրականացման աշխարհագրական տարածքում ներառված ոչ բոլոր բնակավայրերն են փաստացի սպասարկվում ընկերության կողմից,

3. Ընկերությանը հանձնարարել իրականացնել խախտումներ արձանագրած 7 գյուղական համայքների փաստացի գործող և հրապարակված գրաֆիկների համապատասխանեցում,
4. Առկա թերությունները մինչև հաջորդ գրաֆիկի հրապարակումը չշտկելու դեպքում ընկերության նկատմամբ կիրառել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցներ: